Հավելված N1
ՀՀ ֆինանսների նախարարի 2017 թվականի
մայիսի 30-ի N 265-Ա հրամանի

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2020 թվականի հունվարի 17-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է
"Գնումների մասին" ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԱՊՁԲ-20/3

«Ջրառ» ՓԲԸ-ի կարիքների համար «Քսայուղերի և յուղերի» ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԱՊՁԲ-20/3 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 2020 թվականի հունվարի 15-ին ստացված հարցադրումները և դրանց վերաբերյալ 2020 թվականի հունվարի 17-ի տրամադրված պարզաբանումները՝

<u>Հարցադրում N 1</u> 1-ին չափաբաժնով նախատեսվող Հիդրավլիկ համակարգերում և այլ նպատակներով օգտագործվող յուղը (Ինդուստրիալ յուղ Ի50Ա կամ համարժեք) կարո՞ղ է լինել 205 լիտրանոց տարաներով:

<u>Պարզաբանում N 1</u> 1-ին չափաբաժնի մասով նախատեսվող Հիդրավլիկ համակարգերում և այլ նպատակներով օգտագործվող յուղի (Ինդուստրիալ յուղ Ի50Ա կամ համարժեք) պահանջվող քանակի 50%-ը կարող է մատակարարվել 205 լիտրանոց տարաներով, իսկ մնացածը՝ 20 լիտրանոց տարաներով:

<u>Հարցադրում N 2</u> 1-ին չափաբաժնով նախատեսվող Հիդրավլիկ համակարգերում և այլ նպատակներով օգտագործվող յուղը (Ինդուստրիալ յուղ Ի50Ա կամ համարժեք) տեխնիկական բնութագրում նշված՝

- Կինեմատիկ մածուցիկությունը 40 աստիճան C դեպքում կարո՞ղ է լինել մինչև 105 մմ2/վրկ
- խտությունը 20 աստիճան C դեպքում կարո՞ղ է լինել մինչև 0.910 գ/սմ3
- բռնկման ջերմաստիճանը կարո՞ղ է լինել ոչ պակաս 225 աստիճան C

<u>Պարզաբանում N 2</u> 1-ին չափաբաժնով նախատեսվող Հիդրավլիկ համակարգերում և այլ նպատակներով օգտագործվող յուղը (Ինդուստրիալ յուղ Ի50Ա կամ համարժեք) ապրանքի տեխնիկական բնութագիրը հստակ է ներկայացված:

<u>Հարցադրում N 3</u> 2-րդ չափաբաժնով նախատեսվող Լիտոլ-24 քսայուղը կարո՞ղ է լինել մինչև 20 կգ տարաներով:

<u>Պարզաբանում N 3</u> Կախված Լիտոլ-24 ապրանք արտադրողից՝ տարաները լինում են տարբեր քաշի: Նախընտրելի է Լիտոլ-24 մատակարարումն իրականացնել 17-20կգ տարաներով:

<u>Հարցադրում N 4</u> 2-րդ չափաբաժնով նախատեսվող Լիտոլ-24 քսայուղի տեխնիկական բնութագրում նշված գույնը պետք է լինի մուգ շագանակագույնից բաց շագանակագույն:

<u>Պարզաբանում N 4</u> 2-րդ չափաբաժնով նախատեսվող Լիտոլ-24 քսայուղի տեխնիկական բնութագրում նշված լիտոլ-24 ապրանքի գույնը որոշված է ԳՕՍՏ 21150-87-ին համապատասխան՝ ելնելով ապրանքի կիրառման բնույթից:

<u>Հարցադրում N 5</u> 3-րդ չափաբաժնով նախատեսված Սոլիդոլի չափման միավորը պետք է լինի կիլոգրամ:

<u>Պարզաբանում N 5</u> Քանի որ Սոլիդոլ ապրանքի ԳՄԱ (CPV) կոդը պայմանագրերի կառավարման և գնումների հաշվետվողականության մոդուլում (PPCM համակարգ) չափման միավորն ընտրված է լիտր և հնարավոր չէ փոփոխել, ապրանքի չափման միավորը նշվել է լիտր: Տվյալ դեպքում անհրաժեշտ է հրավերով սահմանված լիտր քանակին համապատասխան կիլոգրամ ներկայացնել

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԱՊՁԲ-20/3 ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Նարինե Նիկոլայանին:

Հեռախոս՝ 012 74 00 77:

Էլեկոտրանային փոստ՝ «sevan_hr.gnum@mail.ru»::

ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԱՊՁԲ-20/3 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով